Անոնս - «Չորրորդ իշխանություն», Ե., 27.10.2006

Հոկտեմբերի 27 և 28-ին Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիան մեծ շուքով կնշի հիմնադրման 60-ամյակը: Այդ երկու օրվա ընթացքում տեղի կունենան մի շարք միջոցառումներ. Ակադեմիայի շենքում կբացվի Արա Սարգսյանի կիսանդրին, այնուհետև ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը, իսկ ամսի 28-ին Ֆիլհարմոնիայի դահլիճում տեղի կունենա համերգ: Ակադեմիան հիմնադրվել է 1944 թվականին, սկզբում միավորված էր թատերական ինստիտուտի հետ, սակայն 1994 թվականից առանձնացել է և գործել որպես ինքնուրույն ուսումնական հաստատություն:

- Ակադեմիայի նոր շենքը բավականին վատ վիճակում էր, և պետությունը 145 մլն դրամ է տրամադրել վերանորոգման համար,- տեղեկացրել է ռեկտոր Արամ Իսաբեկյանը,- շենքն այժմ ավելի բարվոք վիճակում է, չի կարելի համեմատել 10 տարի առաջվա հետ:

Ակադեմիան մասնաճյուղեր ունի նաև Գյումրիում և Վանաձորում: Ակադեմիայում ընդհանուր առմամբ սովորում է 900 ուսանող: Տարեկան ակադեմիայի 2 ուսանող գնում է սովորելու Փարիզ, որտեղ հայաստանյան կուսակցություններից մեկի հովանավորությամբ Սենա գետին հարող տարածքում բացվել է արվեստանոց: